

ՆԱԽԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐՈՒՄ

ԳԱՎԻՔ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Կրկնությունը հսկայական դեր է կատարել հայերենի բառակազմության և բառապաշարի հարստացման գործում հայոց լեզվի զարգացման ամենավաղ շրջաններից սկսած¹:

Կրկնավոր բարդության ամենապարզ ձևը հարադրական կրկնավորն է, որի քաղադրիչներն իրարից անկախ կրկնվում են: Բերենք V դարից վկայված նմուշներ՝ ազգի ազգի «աեսակ-տեսակ», գունդ գունդ, երփն երփն «գույնզգույն, բաղմեբանգ», ընտիր ընտիր և այլն:

Կրկնությունների մյուս տեսակը նախդրավորներն են: Ծվ գրաբարում, և՛ ժամանակակից հայերենում կան բաղմաթիվ բառեր, որոնք կազմվել են հայերենի առ, գ, ընդ, ըստ, ի, ց նախդիրների և կրկնվող բառերի միջոցով²: Քննենք դրանք առանձին-առանձին՝ ըստ նախդիրների:

Գրաբարում նախդիրները դրվել են կրկնվող բառերի միջև՝ արտահայտելով նախդրային տարբեր նշանակություններ: Ժամանակի ընթացքում քերականական այդ կապակցությունները, շարունակ գործածվելով, կայունացել են, քարացել՝ ստանալով ամբողջական բառական արժեք: Դրանք ավելի հաճախ մակբայներ են:

Առ նախդրով ունենք՝ խիտ առ խիտ, մօտ առ մօտ, դէմ առ դէմ, բան առ բան, հասարակ առ հասարակ և այլն: Օրինակներ՝ «Բաղմաց օրահասք մահու հասանէին, մանաւանդ թանձրութենէ անկեալ դիականց մօտ առ մօտ» (Ծղ., 118), «Եւ անդէն առ ի նմին խիտ առ խիտ, մի առ միոջ դորակաձև բոլորակէ» (Բ. Կեսար., 265):

Կրկնվող բառերի հետ գործածվելով՝ առ նախդիրը կապակցությանը հաղորդում է հաջորդականության իմաստ: Որոշ կապակցություններում այդ իմաստը հստակ ընկալվում է. օրինակ՝ «Արարէ՛ք բան առ բան նամակիս պատասխանի» (Ծղ., 27): Բան առ բան ճամեն մի խոսքին առանձին», բառացի՝ «խոսք խոսքի ետևից» (բառ առ բառ...), որը, ի դեպ, մեր օրերում ըզգալիորեն կենսունակ է:

Մյուս դեպքերում քերականական իմաստը հիմնականում մթաղնած է, և լսողը դրսևորում է զորացնող, սաստկական նշանակություն: Օրինակ՝ «Խիտ առ խիտ թանձրացոյց անդուլութեամբ զպաշտօն պղծութեան իւրոյ» (Ծղ., 12):

Այսօր էլ կրկնավորի «—առ—» կաղապարը բավական գործուն է: Այսպես՝ Պ. Սևակի չափածոյում հանդիպում ենք հիշյալ կաղապարով ստեղծված բաղմաթիվ հարադրական կրկնավորների՝ բանակ առ բանակ³, գիսակ առ գիսակ, թավալ առ թավալ, ժամանակ առ ժամանակ⁴, լեղեռն առ լեղեռն, խավ

¹ Հանգամանալից տե՛ս Հ. ր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների (այսուհետև՝ ԼՔՀԼ), հ. 3, Երևան, 1957, էջ 83—100:

² Նախդիրներով կրկնվող բառերը քաղելու իմաստները ստուգել և համեմատել ենք ըստ հետևյալ բառարանների՝ Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգետեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, 2, Վենետիկ, 1836, 1837 (այսուհետև՝ ՆՀԲ), Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1—4, Երևան, 1944—1945, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1—4, Երևան, 1969—1980 (այսուհետև՝ ԺՀԲԲ), Է. Բ. Ազադյան, Արգի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976: Նախդրավոր կառույցների իմաստները ճշտել ենք՝ Ա. Ա. Աբրահամյան, Գրարարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 229—260 և Վ. Ա. Քոսյան, Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, էջ 182—258:

առ խավ՝, կանգուն առ կանգուն, կռնակ առ կռնակ՝, կտուռ առ կտուռ՝, շերտ առ շերտ՝, տառ առ տառ՝, փաղանգ առ փաղանգ, փերք առ փերք, գրամ առ գրամ՝, կաթիլ առ կաթիլ³: Սրանց մեծ մասն ավանդական է և դործածական ինչպես գեղարվեստական գրականության, մամուլի լեզվում, այնպես էլ բանավոր խոսքում (աստղանիշ ունեցողները), մյուսները դիպվածաբար կազմություններ են՝ նմանակությամբ: «—Առ—» կրկնավոր կաղապարը վարուցի վեր գործուն է, ուստի վերոհիշյալ կրկնավորների հեղինակային ծագումը խիստ դժվար է որոշել:

Առ նախդրով այս կաղապարը, ըստ էության, ունի բառակազմական անսահմանափակ հնարավորություններ: Այս հարադրական կրկնավորները նշում են գործողության հատկանիշը՝ մասնավորի և ընդհանուրի հարաբերակցության միջոցով, այսպես՝ կռնակ առ կռնակ = «կռնակ կռնակի հետևից, կռնակների միջոցով», առ առ տառ = «տառ տառի հետևից, բոլոր տառերը մեկ առ մեկ» և այլն: Այստեղ առկա է առ նախդրի հաղորդած հաջորդականության իմաստը, շնայած դա այսօր հստակ չի գիտակցվում արդի հայերենի քերականական համակարգում նախդիրների գրեթե մեռած լինելու հետևանքով (ավելի շուտ ըմբռնվում է մասերից բաղկացած լինելու, մաս-մաս կատարվելու գաղափարը): Ուստի, կարելի է կարծել, գործ ունենք նախդրի զուտ բառակազմական արժեքի հետ՝ ըստ վերոհիշյալ կաղապարի:

Տեղական ժամանակի ընթացքում առ նախդրով վերլուծական բարդություններից մի քանիսը մեկ ընդհանուր շեշտի անցնելու հետևանքով վերածվել են կցականների: ԺՀԲԲ-ում գրանցվել են դեմառդեմ, երեսառերես⁴, մեջառ-մեջ, միառմի, փոխառփոխ բառերը: Սրանց սկզբնական ձևերը՝ քերականական կապակցությունները, գրաբարից են գալիս: Մի առ միոջ (>միառմի) կրկնավորըն է միայն փոքր-ինչ ձևափոխվել՝ միոջ սեռականի այսօր անգործածական լինելու և մյուս կրկնավորների համաբանության հետևանքով: Հեշտությամբ կարելի է նկատել, որ եթե մի առ միոջ-ը չհաշվենք, առ նախդրով կազմված ու կազմվող կրկնավորների մեջ արմատները կամ բառերը երկու եզրերում էլ ուղիղ ձևով են (դեմ առ դեմ և այլն):

Բառարանում գրանցվելու փաստը, սակայն, չի նշանակում, թե միաձույլ արտասանությունն ու գրությունը վերջնական են. վերլուծականությունից համադրականությունն անցումը շատ դեպքերում առայժմ նորմավորված չէ: Բերենք հետևյալ օրինակները. ա) «Ու կը մնամ տեսիլքիս դիակի հետ դեմ առ դեմ» (ՎՎ, 33): բ) «Որ ոսոխի նետերի մրրկներին դեմառդեմ Մնացել եք աներեր ու կանգնել եք ինչպես վեմ» (ՍԿ, 123): ա) «Անցնում էր սեղանից սեղան, մեկ առ մեկ ընդունում պատվերները» (ՀԶ, 11. II. 1987): բ) «Հսկա վիշապների գլուխները քաղեց Ու մեկառմեկ խեղեց նրանց պոչերը նենգ» (ՀԴ, 13)⁵:

Այս կետերում բերված օրինակներում նկատելի է ավանդույթի ուժը. գործուն նշանակություն ունեն և շեշտը, հնչերանգը, երբեմն հարկ է զգացվում առանձին-առանձին շեշտելու, մատնանշելու յուրաքանչյուր բաղադրիչը. տրվում է արտասանական դադար: Ակնհայտ է նաև, որ մի շարք կազմություններ թերևս երբեք էլ չեն վերածվի համադրական-կցական կրկնավորների: Օրինակ՝ մեր աչքին ու լսողությանը բոլորովին խորթ են քանակաբանակ-ը, լեգեռնալեգեռն-ը և այլն⁶: Հիմնական խոչընդոտը կարծեք այն է, որ հնարավոր չէ դրանք արտասանել մեկ ընդհանուր շեշտի սահմաններում, բարեհիշ-

³ Ա. Պ ա պ ո յ ա ն, Պարույր Սևակի չափածոյի բառարան, հ. 1, 2, Երևան, 1981, 1982: Հճր-չին երկու բառը՝ Պ. Սևակ, Մուտք, Երևան, 1986, էջ 136—137:

⁴ Սրա բաղադրիչներն առանձին-առանձին չեշտվում են, տարածվածը վերլուծական ձևն է, կցվել է նմանակության հետևանքով:

⁵ Մեկառմեկ-ն այս ձևով որևէ բառարանում դեռևս տեղ չի գտել:

⁶ Ունենք նաև այնպիսի վկայություն՝ «Հարցական նշանները ոչ թե պակասում, այլ բազմաբանաբանում են» (ՍԳ, 1986, № 5, էջ 71):

չյուն չեն: Կարևոր նշանակություն ունի կրկնվող բառի ընդգծված նյութական նշանակությունը (հմմտ. փոխառություն և տուն առ տուն):

Ձ նախդրով կրկնավորները ընդամենը մի քանիսն են՝ գույնզգույն (հմմտ. գույն-գույն), հետզհետե «մեկը մյուսի ետևից, հաջորդաբար. կամաց-կամաց, աստիճանաբար», կույրզկուրայն «կուրորեն», արևմա. ինքզինքը// ինքզինք, մեկզմեկի// մեկզմեկու// մեկզմեկ: Արևելահայերենում սրանց համապատասխանում են աննախդիր ձևեր՝ ինքնիրեն, մեկմեկու⁷:

Ձ-ն գրաբարի հայցական հոլովի որոշյալ առման ցուցիչն է, որն ըն-հել է բառամիջում և քերականական իմաստի աղոտանալու հետևանքով բո-լորովին չի գիտակցվում: Բոլոր բառերն էլ (բացի կույրզկուրայն-ից, որ հնա-ցած է) ունեն գործածության մեծ հաճախականություն:

Միայն ստուգաբանորեն կարելի է կրկնավոր համարել զով-հով բառը (Գրիշերն եկավ զով-հովն ընկավ—ԱԻ, 39): Զով-ը կազմվել է զ նախդրով ևով բնիկ հայերեն արմատից՝ զհով, որտեղից հ-ն հետագայում ընկել է⁸: Զով-հով կրկնավորն առաջացել է այն ժամանակ, երբ զ-ն իբրև ձևափոխ չի ըմբռնվել: Նույն ձևով՝ եռուզեռ (<եռ ու զեռ), ամպուզամպ (<ամպ ու զամպ), արդուզարդ (<արդ ու զարդ), որոնցում ստուգաբանորեն առկա է զ նախդիրը՝ սաստկական, զորացնող նշանակությամբ: Ուստի այդտեղ ավելի շուտ պիտի նշվի ու շաղկապի և շեշտի, քան թե նախդրի բառակազմական արժեքի մասին⁹: Ընդ նախդրով գրաբարում գործածվել են հետևյալ կրկնավոր մակբայնե-րը՝ ետ ընդ ետ, խիա ընդ խիա, մօտ ընդ մօտ, միայն ընդ միայն, հուպ ընդ հուպ, մերձ ընդ մերձ, այլ ընդ այլոյ և այլն¹⁰: Օրինակներ՝ «Փայթ ընդ փոյթ հասուցանէ առ խորով» (խոր., 315), «Մերձ ընդ մերձ հասանելոյ էր ի վերայ նորա» (Փարպ., 77):

Ի տարբերություն մյուսների, այլ ընդ այլոյ կրկնավորում երկրորդ բա-ղադրիչը թեք ձևով է: Սա «ուղղական+ընդ+սեռական հոլով» կառույցն է և նշանակել է «մեկը մյուսի փոխարեն»։ Հմմտ. «Զսերմն զոր սերմանես, որ ոչ այլ ընդ այլոյ գայ» (Ծգն., 294): Սակայն շարահյուսական կապի իմաստի մթափնման հետևանքով իմաստային զարգացում է ապրել՝ ձևով բերելով նաև ածականական (մակբայական) նշանակություն՝ «խառնիխուռն, այլալվաժ, աղավաղված»։ Հմմտ. «Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց ցուցանե-լով նոցա այլ ընդ այլոյ ստույթեամբ» (Ծղ., 93):

Ժամանակակից հայերենում այս կարգի կազմությունները կենսունակ չեն: Բառարանային միավորներ են դարձել այլընդայլո, թափընդթափ, հաղընդհաղ, հետընդհետ (<ետ ընդ ետ), մեջընդմեջ, մերթ ընդ մերթ// մերթընդմերթ կրկ-նավորները, որոնցից վերջին երկուսն են առավել գործածական:

Թափընդթափ «արագ թափով, սրընթաց. թափանցելով», հաղընդհաղ «ընդ-հատ-ընդհատ», մեջընդմեջ «մեջքառմեջ, հաջորդականորեն մեջ տալով. երբեմն-երբեմն» բառերի ծագումը հավանաբար պիտի կապել գրաբարի հետևյալ կազ-մությունների հետ՝ ընդթափ (անցանեմ), ընդհատ, ընդ մէջ: Իսկ մերթ ընդ մերթ// մերթընդմերթ-ը փոխնիփոխ գործածվում է երկու ձևով, սակայն ավելի հաճախ՝ առաջինը: Պատճառներից մեկը թերևս այն է, որ սա իմաստային այնպիսի սեղ-տաճման չի ենթարկվել, ինչպես, ասենք, մեջընդմեջ-ը, երկրորդ՝ ընդ-ը լրիվ չի ձուլվել և ընկալվում է, որովհետև նախդրավոր ձևին զուգահեռ, թեկուզև հազվադեպ, գործածական է մերթ-մերթ ձևը: Երրորդ՝ նախորդ կետերում նշված պատճառներով բաղադրիչներն առանձին են շեշտվում:

⁷ Հր. Աճառյանը նշում է (ԼՔԶԼ, հ. 5, Երևան, 1965, էջ 87) զ նախդրով արևմտահայ բար-բառային բառեր՝ տեղընդտեղոք «մանրամասն, տեղը լավ որոշած», նախընդ աշատ նորա, քաղերգաղը «գողոմի կերպով» (հմմտ. քաղերգաղ, քաղերգաղ):

⁸ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 116:

⁹ Հմմտ. Ա. Ա. Մուրավյով, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 152:

¹⁰ Հուպ ընդ հուպ, մերձ ընդ մերձ, փոյթ ընդ փոյթ կրկնավորներից, դրանց հապավումից են ծնունդ առել ընդհուպ, ընդմերձ, ընդփոյթ բառերը (հմմտ. ինքնընդհանրաբար և ըստինքսով),

Մյուս կրկնավորները ևս ունեն գրության զուգաձևություններ:

ա) «Այլ ընդ այլոս սխալ գրույցներ կը շրջեն» (ՏԿ, ՏԶ, 290):

բ) «...կամ պարզապես վերը բերված տեղեկությունների այլընդայլոս կրկնություն» (ԳՏ, 1985, № 12, էջ 37):

ա) «Հիմարություններ կրսեմ մեջ ընդ մեջ» (ՏԿ, ՏԶ, 407):

բ) «Այնուհետև մեջընդմեջ ներկայացված են հայաշունչ բանաստեղծություններու արձակ գործեր» (ՀԶ, 18.II.1987):

Նկատելի է, որ հաղթել են կցականները:

Ընդ-ով կազմված կրկնավորներում ևս գերակշռողը արմատների կամ բառերի ուղիղ ձևով կրկնումն է:

Ըստ նախորդով կրկնավոր մակբայներում սովորաբար երկրորդ բաղադրիչը դրվում է բացառական հոլովով, ինչպես՝ ամ ըստ ամէ, օր ըստ օրէ, մի ըստ միոջէ, կարգ ըստ կարգէ և այլն: «Ըստ+բացառական հոլով» կառույցը ցույց է տալիս հաջորդականություն: Օրինակներ՝ «Կարգել մի ըստ միոջէ գիրս և զգործս» (Փարպ., 2), «Սր ըստ օրէ սատակէին» (Բուզ., 145):

Իսկ ինքն ըստ ինքյան կազմության մեջ «ըստ+տրական հոլով» կառույցն է, որը գրաբարում, ինչպես հայտնի է, նշանակել է «համաձայն. նման»: Նախապես արտահայտել է «իր էությանմբ, իր էության համաձայն, իրենով, ինքնին»: Այսօր այլևս նախդրային ծագումը չի գիտակցվում. տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում. մակբայականին զուգահեռ ստացել է նաև եղանակավորող բառի արժեք՝ «այո, իհարկե, անշուշտ» նշանակությամբ, ուստի ձևաբանորեն տարարժեք է:

Ըստ նախորդով կրկնավորներից այսօր կենսունակ են օրքստօրե¹¹, ինքն-ըստինքյան (ունի ըստինքյան<ըստ ինքեան տարբերակը) բառերը, որոնք վերջնականապես համադրական կրկնավոր բարդություններ են դարձել:

Համեմատաբար մեծ խումբ են կազմում այն կրկնավորները, որոնց կազմում կա ի նախդիրը: Հայերենի որևէ նախդրով կազմված ամենահին կրկնավորը թեևս տրիտուր-ն է, որ նշանակել է «փոխարեն տրված պարզև»: Հր. Աճառյանը բառիս արմատն է համարում տալ (<հնի.*dā-)բայի տուր հրամայականի ձևը¹², իբրև՝ տուրիտուր: Առաջին բաղադրիչի ձայնավորն օրինալարներ են՝ հնչյունափոխվել է: Ժամանակակից հայերենում գործածական է ի տրիտուր («որպես փոխհատուցում») ձևով:

Գրաբարում ի նախդիր ունեցող կրկնավորները ևս մակբայներ են՝ կեղծս ի կեղծս, մէտ ի մէտ, ծայր ի ծայր, մօտ ի մօտ, գայթ ի գայթ, կաղ ի կաղ// կաղ ի կաղս// կաղս ի կաղս (ս-ն մակբայակերտ ածանց է, այժմ ունենք նաև կաղնիկաղ), խառն ի խառն// խառնիխառն, կարն ի կարնոյ, լու ի լու, փոյթ ի փոյթոյ և այլն: Բնագրային օրինակներ՝ «Խառն ի խառն ինչ ճանաչէր զանեղսն» (Նդ., էջ 30), «Բազում որայս մօտ ի մօտ առ միմեանս կուտեալ թողուցուն» (Փարպ., 152), «Իսկ յորժամ յաճախեալ բազմասցի մեղրն, խառ ի խառ եւ մթեր առ մթեր ժողովեալ կուտիցէ» (Բ. Կեսար., 264)¹³:

Ինչպես տեսանք առ, ընդ, մանավանդ ըստ նախդիրներով կրկնավորները քննելիս, թեք արմատների կամ բառերի ձևով կազմված կրկնավորներում հիմնականում պահպանվել են կապակցությունների ստուգաբանական (իմա՝ նախդրային) իմաստները: Այստեղ, օրինակ, կարն ի կարնոյ կրկնավորում երկրորդ բաղադրիչը բացառական հոլովով է դրված՝ ի կարնոյ: Նախնական «կսր-ճից կարն» իմաստը զարգացել և ստացել է մակբայական նշանակություն՝ «համառոտությամբ, կարճառոտ, շուտով, սուղ ժամանակում, քիչ խոսքով»:

¹¹ Երբեմն արևմտահայերենում գրաբարի ազդեցությամբ գործածվում է օր ըստ օրէ ձևով: Օրինակ՝ «Կապերը օր ըստ օրէ ավելի կ'ամրանան ու կ'ընդարձակին» (Լ, 13. XII. 1986):

¹² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 357:

¹³ Ի և առ նախդիրների բառակազմական և իմաստային ընդհանրությունների ուշադրով հանդիսացողում:

Այս կրկնավորների մի մասն էլ, տևաբար գործածվելով, կայունացել է՝ երբեմն հենց գրաբարյան փուլում վերածվելով համադրական բարդության: Այստեղ կարևոր դեր ունի ոչ միայն շեշտը, այլև նման կազմություններում ի նախդրի հաղորդած յուրահատուկ նշանակությունը: Կրկնավոր բարդություններում նախդրային իմաստները խիստ մթազնաժ են, և ի-ն հիմնականում հանդես է գալիս մակբայական իմաստ հաղորդող գործառույթով, զուտ բառակազմական արժեքով: Այս տեսանկյունից նախդիրը հարաբերակից է դառնում ա հոդակապին, ու, և շաղկապներին (հմմտ. բարձիթողի ու բարձեթողի, ինչպես՝ դեմառդեմ և դեմադեմ), որոնք ևս միացնում են բարդությունների բաղադրիչներ, ինչպես՝ նոսրանոս, ջերմաջերմ, ժիրաժիր, գունդագունդ, չարաչար (բոլորն էլ վկայված են Աստվածաշնչում), այբուբեն, այբուձի, երթևեկ, նիստովկաց և այլն:

Երբ բաղճյունական բարդություններն են վերածվում համադրականների, սովորաբար ձեռք են բերում նոր կամ փոխաբերական իմաստ, իսկ նախդիր ունեցող կրկնավորներում նման երևույթ չի նկատվում: Բառիմաստը «հենվում է» անմիջապես բաղադրիչների իմաստի վրա, ինչպես՝ կաղիկաղ/կաղնիկաղ «կողողավ», դողիդող «դողգողալով, վախենալով» և այլն: Իսկ փոխաբերական նշանակության եզակի նմուշները, օրինակ՝ ծայրեծայր «չափազանց, խիստ» (Նա ժողովից տուն եկավ ծայրեծայր գրգռված»—Մ. Խանդավազյան)¹⁴, ուշ շրջանի երևույթներ են և կապվում են ոչ թե բառակազմական գործընթացին, այլ բառագործածության, խոսքաշարի հետ:

Ի տարբերություն իսկական բարդությունների՝ կենսասեր, ջրաման և այլն, բաղճյունական, այդ թվում կրկնավոր բարդություններում բաղադրիչների միջև գոյություն ունի համադասական և ոչ թե ստորադասական հարաբերություն: Այս փաստն ընդգծում է բառակազմության մեջ նախդրի կամ շաղկապի, ինչպես նաև շեշտի կարևոր նշանակությունը:

Ի նախդրով կրկնավորներում տեսնում ենք հետևյալ կառուցվածքային առանձնահատկությունները:

Ա) Երկու եզրն էլ դրվում են ուղիղ ձևով՝ խավիխավ, ծալիծալ, ճեխճե, կույրիկույր, քեիքե, վառիվառ, փռիքիփռի, դողիդող, թույրիթույր և այլն: Սրանց մեծ մասը գրաբարի ի նախդրով կազմությունների կցումից է առաջացել (վառիվառ, ծայրիծայր, խավիխավ և այլն), մի երկուսն էլ անջատվել են կայուն բառակապակցություններից (հետո, իհարկե, անցնելով նույն ուղին), օրինակ՝ ծալ ի ծալ (առնուլ)→ծալիծալ, քե ի քե (ճարկանել)→քեիքե: Որոշ բառեր էլ՝ կույրիկույր, դողիդող, թույրիթույր, գողնիգող և այլն, չենք հանդիպում հին հայերենի բառարաններում, սակայն կարծում ենք, որ սրանց սկզբնաձևերն էլ կարելի է գտնել գրաբարի փուլում: Ընթացողում ենք առաջացման երկու ուղի.

1) նախդրային համապատասխան կազմություններից, որոնք համեմատաբար ուշ են կայունացել¹⁵ և 2) նման այլ կրկնավոր բառերի համաբանությամբ:

Բ) Առաջին եզրը դրվում է բացառական հոլովով՝ բացեիբաց, ծագեիծագ, ծալրեիծալր, մեկեմեկ, պարգեիպարգ (հմմտ. գրք. պարգ ի պարգոյ):

Բացառականը «ի-հայցական հոլով» կառույցի հետ արտահայտել է մի կետից մինչև մյուս կետը՝ իմաստը¹⁶, Գրաբարի այդպիսի կապակցությունների նաև առաջացել վերոհիշյալ բառերը: Հմմտ. «Շինեաց գնա քաղաք Դավթի շուրջանակի ծագէ ի ծագս», «Ձգի ի ծագաց մինչև ի ծագս» (ՆՁԲ, հ. 1, էջ 998): Նույն կառույցով (իմաստի համար տե՛ս հաջորդ կետի տակ). «Բացէ ի բաց ճանաչի», «Ի բացէ ի բաց ազդ առնէ տալ աւետիս» (Ն. տ., էջ 475):

¹⁴ ԺՀԲԲ, հ. 2, էջ 637.

¹⁵ Հմմտ. գրք. մօտ ի մօտ, մօտ ի մօտոյ և մոտիմոտ, որն արգի հայերենի որևէ բառարանում չկա: «Ձգացվում էր, որ բոլորը նրան էին մոտիմոտ անում» (ՆՂ, 274): Ոմանք նաև մոտմոտ, մոտ-մոտ:

¹⁶ Գրաբարյան ձևերում հաճախ բացառականը հանգես է գալիս առանց ի նախդրի:

Մեկեմիմեկ-ը արևմտահայերեն ժողովրդական լեզվի արգասիք է։ Հետաքրքրական է, որ ժամանակակից հայերենում գործածական են նաև այս բառերի «թարգմանված» ձևերը՝ ծայրից ծայր, մեկից մեկ։

ո) Երկրորդ եզրն է դրվում բացառական հոլովով՝ նորինոռ, պարզիպարզ, վերջիվերջ¹⁷։ Սրանք ևս ծնունդ են առել գրաբարյան քերականական կապակցություններից։ Հմմտ. «Ունէր և ձի բազում և նոր ի նորոյ փոխեալ զերծաւ» (ՆՀԲ, հ. 2, էջ 442)։ Հնում գործածական էին ի պարզոյ ճեղանակի պարզության ժամանակը, ի վերջոյ բառական արժեք ունեցող նախդրավոր կապակցությունները, որոնց հիմնական բաղադրիչի հավելումով էլ ավելի ուշ առաջացել են պարզ ի պարզոյ (> պարզիպարզ), վերջ ի վերջոյ (> վերջիվերջ) կրկնավորները։ Այս կրկնավորները ևս համեմատենք ժամանակակից հայերենի համապատասխան ձևերի հետ՝ նորից նոր, պարզից պարզ (ասում են նաև պարզից էլ պարզ է։ Ո՞րն է, օրինակ, ծայրեծայր, «ծայրից ծայր» և պարզիպարզ// պարզեիպարզ «պարզից պարզ» բառերի իմաստային տարբերությունը։ Առաջինն արտահայտում է տեղի իմաստ, երկրորդը՝ «ամբողջովին, բոլորովին», այսինքն՝ պարզիպարզ//պարզեիպարզ և պարզից պարզ = «ամբողջովին պարզ», նորինոռ՝ նորից նոր = «բոլորովին նորովի»։ Այս վերջին իմաստի համար հմմտ. «Իսկ երբ տասներորդում էր, բացեիքաց հայտարարեց՝ գլուղատնտես կդառնա» (ՄԳ, Բ, էջ 47)։

Խառնիխումն բառում տեղի է ունեցել կրկնավորներին հատուկ ձայնդարձ՝ ա/ ու (հմմտ. ծակուծուկ, ձայն-ձուն և այլն)։

Հետաքրքրական առնչություններ կան այս և ուրիշ տեսակի կրկնավորների միջև։ Նախդրավոր ձևերին զուգահեռ գործածվում են նույնիմաստ և նմանահունչ կրկնավորներ, որոնք միացած են՝ ա) բառի պարզ կրկնությամբ (գողնի-գող. գող-գող, ծալիծալ. ծալ-ծալ, վառիվառ. վառ-վառ), բ) որևէ հոլովի վերջավորության հավելումով (գողեգող, քեիքե. քե-քեի, ծալեծալ, ծայրեծայր. ծայրեծայր, փոխեիփոխ. փոխեիփոխ, շաբիշաբ. շաբեշաբ), գ) նախդրով և հոլովական վերջավորությամբ (ծագեիծագ. ծագեծագ, ծայրեիծայր, պարզեիպարզ. պարզիպարզ. պարզ-պարզ)։ Այստեղ ի նախդիրը և բացառականի ե-ն (< է) միանշանակ ու հավասարարժեք են։ Հիշյալ բոլոր ձևերն էլ գերազանցապես հատուկ են ժողովրդական լեզվին։

Ինչպես առ, ընդ (մասամբ՝ ըստ) նախդիրներով կրկնավորները, ի-ով միացածները ևս ժամանակակից հայերենում հաճախ հանդես են դալիս գրության երկու տարբերակներով էլ։ Այսպես.

ա) «Եվ ապա կը բարձրացնեն նվերը սկիհի մը պես, «հոյակապ», «սքանչելի», «գլուխ-գործոց» բացականչելով փոխն ի փոխ» (ՏՎ, 53)։ բ) «Հեռվում, Արարատյան դաշտում, լույս ու ստվերի փոխեիփոխ խաղ էր» (ՄԳ, ՄՍԱ, 172)։ ա) «Վերջ ի վերջո ճեմակելու են, թե՛...» (ՄԳ, Բ, 185)։ բ) «Սակայն մահը վերջիվերջո բռնած էր անոր կողորդեն» (ՏՎ, 171)։

Զուգաձևություններ տեսնում ենք անգամ նույն հեղինակի լեզվում. Պ. Սեվակ.—1) «Այդ ժպիտը վերջ ի վերջո¹⁸ փոխարկվում է ժամածուռության...» (հ. 1, 357)։ 2) «Ստեղծվեց ահա, վերջիվերջո, նա» (հ. 4, 244)։

Երուխան.—1) «Եվ անոր վառ ի վառ շողշողումովը կը խողտացնեն թաղեցիին աշվրնները» (535)։ 2) «Վառիվառ ասպազենին ճոխությունը և կառքին շքեղությունը խելքի պտույտ տվին թաղին մամիկներուն ու կիներուն» (344)։

Տ. Կամսարական.—1) «Շրթները փոխն ի փոխ կը համբուրեն որդեկին ճա-

17 ԺՀԼԲԲ-ում կա նաև վերիվերո բառը, որն առաջացել է վայրիվերո (սխառնիխումն, անկարգ, անկապ) բառից այ>ե հնչյունափոխության հետևանքով։ Ուստի, ըստ էության, սա կրկնավոր չէ, և չպետք է խառնել գրաբարի վեր ի վերոյ (ավերակից, երեսից, արտաբուստ) մակերայի հետ («Երբև լուաւ զայս թագաւորն, ի խոր խոցեալ՝ վեր ի վերոյ ծիծաղեցաւ—եղ., 13)։

18 Ի վերջո-ն այսօր անկախ և շատ կենսունակ միավոր է։ Գուցե հենց սա՞ է պատճառը, որ վերջ ի վերջո կրկնավորը լիովին չի վերածվում համադրականի։

կատն ու կը մըմնջեին դեռ» (301): 2) «Կը դիտեր... փոխնիփոխ իր խզրատված դաստակը և զինք շրջապատող անձկուտ գլուխները» (276):

Այս օրինակները պարզորոշ ցույց են տալիս վերլուծականությունից համադրականության անցման գործընթացը, որն առավելապես բնորոշ է XIX դ. վերջին և մեր դարին ու տեղ-տեղ ցայսօր էլ չի ավարտվել: Անջատ գրությունն ավելի բնորոշ է արևմտահայ գրական լեզվին, որը բացատրվում է նրա առավել ավանդապահությամբ (ինչ խոսք, իր դերն է կատարում նաև ավանդական ուղղագրությունը):

Մեր օրերում ի նախդրով կրկնավորները հիմնականում գրվում են միասին¹⁹: Օրինակներ՝ «Կուրծքիս ներքև, Դողդողագին ու ճեխն, Մեկը այնպե՛ս կը հեկհեկա» (ՎՎ, 17), «Բացեիքաց ծառացումը նորություն էր» (ԱՄ, 90), «Նրան պարզեի պարզ ասում են այն, ինչ իրականում կա» (ԵԵ, 15.XII.1986), «Կտցում են հեղեղի շունչը, հետո խառնիխուռն հեռանում» (ՄԳ, Բ, 7):

Իսկ հարկ եղած դեպքում, երբ անհրաժեշտ է առանձին-առանձին շեշտել յուրաքանչյուր բաղադրիչը, արդեն ունենում ենք հարադրական կրկնավոր բարդություն: Օրինակ՝ «Ժողովուրդ մի ողջ... Եկավ շաբ ի շաբ» (ՊՍ, հ. 4, 231):

Ի նախդրով գոյություն ունեցող կրկնավորների նմանակությամբ վերջին ժամանակներում կազմվել են նորեր. շաբիշաբ՝ «շաբքերով, շաբքեր կազմած», նույնն է՝ շաբեշաբ, դարսիդարս՝ «դարսերով իրար վրա շարված՝ դասավորված»: Օրինակ՝ «Իր կտցի վրա այնտեղից հանեց... Շողեր դարսիդարս» (ՊՍ, հ. 4, 9): Հեբք ի հեբք-ը («հերթով») նորակազմ հարադրական կրկնավոր մակբաւ է (կարելի է համարել դիպվածային կազմություն). «Ժողովուրդ մի ողջ սրտով վշտառու Ելավ հեբք ի հեբք» (ՊՍ, հ. 4, 231):

Ընդամենը երկու կրկնավոր էլ ունենք ց նախդրով՝ տաբեցտաւի և օրեց-օր, որոնցում տեսնում ենք երբեմնի զուտ նախդրային կիրառություն՝ տաբեցտաւի և օրէ gor, նախդրի հիմնական «մինչև» նշանակությամբ: Այս բառերում ց նախդրի հաղորդած քերականական իմաստն աղոտացել, ապա իսպառ մթագնել է և այժմ վերականգնվում է միայն ստուգաբանական վերլուծությամբ: Այս է թերևս պատճառը, որ տաբեցտաւի բառը սխալմամբ հազվադեպ գրվել է տաբեց-տաւի ձևով, որտեղ ց-ն ընկալվում է իբրև բացառական հոլովի վերջավորություն (հմմտ. քաղաքից քաղաք, օրերից մի օր): Սակայն և՛ տաբեցտաւի և օրեցօր բառերում ց-ն նախդրի է, թեև ուղ ալն պատճառով, որ ո՛չ գրաբարում, ո՛չ էլ նոր գրականում ու բարբառներում տաբեց և օրեց բացառականի ձևեր չունենք: Սրա օգտին են վկայում նաև օրեցօր բառի աննախդիր ձևերը՝ օրե օր և օրեօր: «Օրե օր ցուրտն ավելի կըլլար Բ.-ի մեջ» (ՏԿ, ՏԶ, 449): «Օրեօր անջրպետը կը բացվեր մեր և անոնց միջև» (ԱՄ, 85):

Նյութի քննությունը ցույց տվեց, որ հայերենում կրկնավոր բառեր կազմվել են բոլոր նախդիրներով՝ առ, գ, բնդ, ըստ, ի, ց, և բառակազմությունը կատարվել է միայն հայերենի միջոցներով ու օրենքներով՝ բոլորովին զերծ այլ լեզուների ազդեցությունից: Հատկապես մեծ թիվ են կազմում ի նախդրով համադրական և առ նախդրով վերլուծական կազմությունները: Կրկնվող բառերը գրվում են ուղիղ և թեք ձևերով: Գրեթե բոլոր կրկնավորներն էլ հայոց լեզվի ուրեք փուլում, այս կամ այն չափով, հանդես են բերել (կամ հանդես են բերում) գրության զուգաձևություններ՝ միասին և անջատ: Նախդրավոր կրկնավորները հակված են համադրականության: Այդ գործընթացն առայսօր շարունակվում է: Նրբամն-երբամն հին բառերի համաբանությամբ ստեղծվում են նորերը:

¹⁹ Անվերապահորեն չենք ասում, որովհետև, ինչպես արդեն նշել ենք օրեսօրե բառի առնչությունը, արևմտահայերենում պատահում են նաև անջատ գրությամբ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՄ—Ա. Մառուկյան, Մանկություն շունեցող մարդիկ, Երևան, 1985:
 ԱԻ—Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1973:
 Բ. Կեսար.—Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցալեռնայ արարչութեան, Երևան, 1984:
 Բուղ.—Փառապետ Բուղանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
 ԳՏ—Գիտություն և տեխնիկա (ամսագիր):
 ԵԵ—Երեկոյան Երևան (օրաթերթ):
 Եղ.—Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1987:
 Եզն.—Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
 Լ—Լրաբեր (շաբաթաթերթ), Լոս Անջելես:
 Խոր.—Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
 ՀԴ—Հ. Դարյան, Կապույտ երազ, Երևան, 1986:
 ՀԶ—Հայրենիքի ձայն (շաբաթաթերթ):
 ՄԳ,Բ—Մ. Գալշոյան, Բովտուն, Երևան, 1974:
 ՄԳ,ՄՍԱ—Մ. Գալշոյան, Մարութա սարի ամպերը, Երևան, 1981:
 ՆԴ—Ն. Դումբաձե, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1987:
 ՊՍ—Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1, 4, 6, Երևան, 1972, 1973, 1976:
 ՍԳ—Սովետական գրականություն (ամսագիր):
 ՍԿ—Ս. Կապուտիկյան, Երկեր, հ. 1, Երևան, 1984:
 ՎՎ—Վահե-Վահյան, Մատյան սիրո և մորմոքի, Երևան, 1971:
 ՏԿ, ՏԶ—Տ. Կամսարական, Տ. Զոկյուրյան, Երկեր, Երևան, 1984:
 ՏՎ—Տ. Վարժապետյան, Հայրենիքես դուրս, Երևան, 1985:
 Փարպ.—Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

ПРЕДЛОГИ В ПОВТОРАХ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ДАВИД ГЮРДЖИНЯН

Р е з ю м е

В армянском языке существуют многочисленные повторные образования, в состав которых входят предлоги *առ, դ, ընդ, ըստ, ի, ց*:

Предложные повторы в основном возникли вследствие стабилизации синтаксических сочетаний древнеармянского языка, поэтому часто сохраняют значения соответствующих предлогов. На разных этапах развития армянского языка эти повторы имели разное написание — слитное и раздельное. Как орфоэпия, так и в связи с ней орфография предложных повторов из-за общего акцентного оформления со значимыми словами тяготеют к слитности. Этот процесс продолжается до наших дней.

Некоторые предложные повторы создавались путем аналогии в относительно позднее время.

Предложные повторы в большинстве своем являются наречиями и употребляются как в языке художественной литературы и прессы, так и в устной речи.